

## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

# ՃԱՐԱԳԹՈՐՅԱԿ

Միև. ՊՈՒՏՏԵՐԱՎԱՆ  
Քարգ. ուսուերենից Վ. Ն.

K 0514



89.718.  
7-94

ՊԵՏԱՐԱՍ 1932 ՅԵՐԵՎԱՆ

891.71.5.

Ա 7-94



Կայարանում,  
պերընի մոտ,  
խճողում ե,  
խառն ու շփոթ.

Վագոնների  
յերկար շարքեր՝  
իրար կողքի  
շարված կանգնել  
սպասում են  
դատարկվելու,  
բայց ճար չկա  
մոտ գնալու:

Ոհա այդ փակ  
վագոններում,  
պատուհանից են  
յերնում,  
կարտոֆիլե

հսկա կույտեր,  
խնդում են շնւտ,  
շուտ դատարկել:  
Շնւտ դատարկել,  
լեցնել պարկեր,  
տանել բաղար,  
հասցնել ճաշի,  
բանվորներին  
անել բաժին:

Վագոնները  
իրարու կից,  
բեռները շատ,  
իսկ տեղը քիչ...

Ու դալիս են  
նոր բեռներով  
գնացքները  
մթերք բերող:

5013

1007  
33762


<sup>2</sup>  
Բըռնված են  
ճամբա ու զիծ,  
նոր գնացքն ե  
գալիս դեմից,  
ՓըշՓշալով  
մոտ ե գալիս,  
սիմաֆորին  
ճայն ե տալիս,  
— «դու, դու, դու, դու,  
ճանապարհ տուր,  
ճանապարհ տուր,  
դու, դու, դու, դու:  
Սիմաֆորն ե  
պատասխանում.

— օինչ ես գոռում,  
հոգի հանում,  
չկա ազատ  
և վոչ մի զիծ,  
համբերիր դու,  
սպասի՛ քիչ»:

3

Կայարանի հերթապահը  
շտապում ե, հեռախոսում,  
— օլսում եք ինձ,  
միվ ե լսում.  
գործարանից.  
լսեցեք ինձ,  
յես խոսում եմ  
կայարանից,  
Վագոններով կայարանում  
կարտոֆիլ ե կանգնած մնում,  
փշանում ե,  
վոչընշանում,

2011-05



Ճեր կոլեկտիվն օնչ ե անում,  
յեկեր,  
յեկեր մեզ ոգնելու,  
վագոնները դատարկելու...

4

Դեպի կայարան,  
շուտով, շուտով,  
դեպի կայարան  
գործից հետո:

Գործից հետո  
նոր աշխատանք,  
շաբաթորյակ,  
շաբաթորյակ:

Հավաքեցեք  
արագ-արագ  
շաբաթորյակ,  
շաբաթորյակ:

Բանվորները  
հավաքեցին,  
զինվորի պես  
շարք կանգնեցին  
հնոցավառ,  
փականագործ,  
հալող,  
ձուլող,  
պղնձագործ...

պիոներական մեր ողակը  
յետ չըմնաց,  
յեկալ մտավ  
շարքը նրանց:

Մեր թըմբուկը  
թընդաց ուժգին,  
շարժեց տեղից  
մեր բանակին.  
մեր բանակին  
բանվորական  
առաջնորդեց

դեպի նոր գործ,  
դեպ կայարան:

5

Կայարանում աղմուկ,  
սուլոց,  
կայարանում հրահրոց:  
Դու, դու, դու, դու  
շոգեշարժի  
շշակն ե սուլում  
դու, դու, դու, դու,  
— «յեկանը բեռներ  
դատարկելու, —  
մեր թըմբուկն ե  
ամուր թընդում,  
կարտոֆիլը վագոններում  
ել չի մնում,  
ել չի փթում»:  
Հնոցավառ,  
փականագործ,  
հալող,  
ձուլող,  
պղնձագործ  
խմբակների բաժանվեցին,  
գործի անցան  
հարվածային:  
Կատակներով,  
ուրախ յերգով,—  
վորը բահով,  
վորը ձեռքով,  
կարտոֆիլը վագոններից  
դատարկում են,  
պարկեր յցնում,  
ու պարկերը տուուզ, տուուզ  
դեպի բաղաք





ճամբար զցում  
մեքենայով մեծ, բեռնատար  
ֆուրգոններով և սայլերով  
արագ-արագ  
ու անդադար:

6

Մեր ողակը  
ժիր ու փութեկոտ,  
հավաքվել ե  
վագոնի մետ:  
Ամենքից շուտ  
փոքրիկ Ակոն  
մագլցեց ու մտավ  
վագոն:

Սպասում ենք,  
դուրս չի գալիս,  
մենք կանչում ենք,  
ձայն չի տալիս:  
Չինի՞ թե  
նա մոլորվեց,  
կարտոֆիլի մեջ  
գլորվեց:  
Քնեց, ի՞նչ ե,  
ձայն չի հանում...  
Բայց չե, չե, չե,  
զործ ե անում:  
— Ի՞նչ եք կանգներ,  
Տի հորանջեք,  
լցրեք պարկեր.



1ի պարկերը  
հերթով շարեք,  
լի պարկերը  
վերցրեք, տարեք  
բեռցրեք ֆուրգոն,  
ավտոմոբիլ,  
բեռները լի,  
լի կարտոֆիլ:

7


Ողակավարը  
ամենից առաջ  
մի պարկը լցրեց,  
շալակին առավ:  
Նրանից հետ  
մի փոքրիկ կողով

լցրեց, շալակեց  
պիոներ Սովոն.  
իսկ տաս տարեկան  
փոքրիկ Մարուսիան  
տասը կարտոֆիլ  
լցրեց պայուսակ,  
հետեւեց նրանց,  
շալակեց, գնաց:  
Այսպես սկզբեց  
մեր աշխատանքը,  
մեր կոլեկտիվի  
շաբաթորյակը:

8

Կոլեկտիվով  
զործի անցանք,

աշխատանքը  
աշխուժացավ...  
վոմանք վագոնից  
կարտոֆիլը հանում են,  
վոմանք լեցնում են,  
վոմանք տանում են,  
վոմանք բեռնում են...  
Ուրիշի վրա  
հույս մի դրեր,  
պարկեր լցրեր,  
լցրեր, կրեր,  
մի ուշանա՛,  
մի թուլանա՛,  
շուրջ մի նայիր,  
մի ծուլանա՛.  
քո ուժերը  
մի խնայիր,  
յեղիր մըցող,  
հարվածային...  
Աշխատում ենք  
միահամուռ,  
մենք կոլեկտիվ,



գործն ընդհանուր։  
Աշխատում ենք  
աշխուժ, լարված,  
աշխատում ենք  
գործով տարված։  
Թևե միքիչ  
մենք հոգնեցինք,  
ույց մեծերից  
յետ չըմնացինք։  
— «Մեր վագոնը  
դատարկեցի՞նք»,  
ողակավարը  
բւրախ կանչեց,  
ու թըմբուկը  
մոտ պահանջեց։  
թըմբուկը թունդ  
թընդաց, թընդաց,  
ու մեր ուռա՞ն  
թունդ վորոտաց։  
Շոգեշարժը սուլեց  
— դո՛ւ, դո՛ւ, դո՛ւ, դո՛ւ,  
գիծն ազատ ե,  
ճանապա՛րհ տո՛ւր.  
դո՛ւ, դո՛ւ, դո՛ւ, դո՛ւ,  
գործը պըծա՛վ,  
դուք կարող եք  
յետ դառնալ տուն,  
դո՛ւ դո՛ւ, դո՛ւ, դո՛ւ  
— «պիոներներ»,

շարքի,  
կարգի,  
գործն ավարտվեց,  
դառնում ենք տուն»—

մեր թմբուկն ե  
ամուր թնդում,  
առաջնորդում  
մեզ դեպի տուն»

9

Շարժվեց վերջին մի ավտոմոբիլ  
վրան դիղված կարտոֆիլ



Աղմկում հ,  
սուլում, փչում,  
ձայն ե տալիս,  
կարծես կանչում  
— «պատրաստ յեղեք  
նկուղ, մտուան,  
բաշխիչ խանութ  
ու ճաշարան:  
Դուռդ բաց թո՞ղ  
մթերբի պահեստ,  
վոր բեռներս  
ընդունես ներս:

Պատրաստ յեղեք,  
ձեզ ել ասեմ,  
պատառաքաղ,  
գղալ, ափսե...  
Աշխատավոր,  
բանվոր ձեռներ,  
բեռ եմ՝ բերում,  
բեռը ձերն ե.  
աշխատել եք,  
հիմա կերեք»:

10

Արդեն մութն եր,  
յերբ մենք հասանք  
գործարան.  
— «մեկ, յերկու, յերեք,  
կանգ առեք»—  
կանգ առանք:



Բանվորական ճաշարան  
հիմա պիտի գնանք մենք,  
բանվորների հետ ընթրենք:  
Պիոներներս շարան-շարան  
մտանք ճաշարան:

Մեզ լավ ընթրիք  
տվին այնտեղ,  
կարտոֆիլ եր  
այնքան համեղ:

Վոչ մի անգամ,  
դեռ վոչ մի տեղ  
չեյինք տեսել,  
չեյինք կերել  
մենք կարտոֆիլ  
այդքան համեղ.



NL0386766

5013

ԳԻԱԸ 60 ԿՈՎ.

МИХ. РУДЕРМАН  
СУББОТНИК  
Госиздат ССРА  
Эривань 1932

Գետնը Խ 1997 Գլավիկս Խ 7045 (բ)  
Տիրած 4000 Վիմ. Գետնը պատվ. Խ 8\*